# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

## *N ՀՀ ԿԱ Ո ԲԸՀԾՁԲ-2017/ԱԿ-07 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ*

**ք. Երևան** **<<06>> 06 . 2017թ.**

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Ա. Համբարյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Կարեն Ավանեսյանը, հիմք ընդունելով 05.05.2017թ.-ին կնքված ՀՀ ԿԱ Ո ԲԸՀԾՁԲ-2017/ԱԿ-07 գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 4.1.2 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը**

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին մատուցել Պայմանագրի N1 Հավելվածով նախատեսված ծառայությունը /այսուհետև Ծառայություն/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ ծառայությունը և վճարել դրանց համար:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 40 000 000 (քառասուն միլիոն) ՀՀ դրամ: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Պատվիրատուն 40 000 000 (քառասուն միլիոն) ՀՀ դրամ գումարի վճարումը կատարում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ԿԱ ոստիկանությունը:

**4 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ոստիկանություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/Հ 900013150041**
**ՀՎՀՀ 01840082**
**հեռ. 59-67-89**
**Էլ. փոստ: police-gnumner@rambler.ru**

Ա. Համբարյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

**Ա/Ձ Կարեն Ավանեսյան**
**ք. Երևան, Գ.Նժդեհի 7/43**
**Հեռ.010-442181**
**<<ՎՏԲ Հայաստանբանկ>> ՓԲԸ**
**Շենգավիթ մ/6**
**Հ/Հ 160460136890**
**ՀՎՀՀ 35031716**
**Էլ. փոստ: microbus@bk.ru**

Կ. Ավանեսյան
/ տնօրեն/ (ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
<<06>> 06 2017թ.
*ՀՀ ԿԱ Ո ԲԸՀԾՁԲ-2017/ԱԿ-07 ծածկագրով գնման պայմանագրի*

**Վճարման ժամանակացույց**

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. արտաբյուջեից | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 1 | Ուղևորափոխադրող ավտոմեքենաների վարձակալության ծառայություններ | | | | | | *20 000 000* | *30 000 000* | *30 000 000* | *30 000 000* | *40 000 000* | *40 000 000* | *40 000 000* | *40 000 000* |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | **40 000 000** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ոստիկանություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/Հ 900013150041**
**ՀՎՀՀ 01840082**
**հեռ. 59-67-89**
**Էլ. փոստ: police-gnumner@rambler.ru**

______________ **Ա. Հովհաննիսյան**
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

**Ա/Ձ Կարեն Ավանեսյան**
**ք. Երևան, Գ.Նժդեհի 7/43**
**Հեռ.010-442181**
**<<ՎՏԲ Հայաստանբանկ>> ՓԲԸ**
**Ծենգավիթ մ/ճ**
**Հ/Հ 160460136890**
**ՀՎՀՀ 35031716**
**Էլ. փոստ: microbus@bk.ru**

______________ **Կ. Ավանեսյան**
/ տնօրեն/ (ստորագրություն)
Կ.Տ.